Մեր խօսակցութիւնը ընդհատեց մի մարդ, որ դուրս եկաւ այն սենեակից, ուր մտել էր Ասլանը:

Նա աչքերին ակնոցներ ունէր դրած եւ ոտքից գլուխ հագնուած էր եւրոպական ձեւով: Ես առաջին անգամ տեսնում էի այսպիսի հագուստով մարդ: Նոյն միջոցին ներս մտաւ եւ երէցկինը նախաճաշիկի մատուցարանը ձեռին բռնած, եւ տեսնելով եւրոպացուն, երեսը խաչակնքեց, ասելով.

— Վա՜հ, տէր Յիսուս, չարը տանես, բարին բերե՛ս...

Տէրտէրը մի անկիւնում կանգնած ծիծաղում էր: Ես լաւ զննեցի, տեսայ, որ եւրոպացին ոչ այլ ոք էր, եթէ ոչ Ասլանը, միայն կերպարանափոխ եղած, որպէս շատ անգամ տեսել էի նրան աբեղայի հագուստով կամ վանեցի վաճառական ձեւացած:

— Հը՜մ, երէցկին, — դարձաւ նա դէպի միամիտ «տիրօխնինէ, — եթէ գիշերով տեսնէիր ինձ, ի՞նչ կանէիր:

— Ի՞նչ պիտի անէի, երեսս խաչ կը հանէի, դու դեւի պէս կը խափանուէիր:

— Ես խօ դեւ կամ սատանայ չեմ, որ խաչից վախենայի:

— Բա՛ սատանան ինչպէ՞ս կը լինի: Ափսոս չէի՞ն առաջուայ շորերդ, որ փոխեցիր:

— Ես ամբողջ տասը տարի այսպէս եմ հագնուած եղել... — պատասխանեց Ասլանը:

— Սուրբ տիրամերը վկայ, դա լաւ չէ, ախար ինչի՞ է նման այսպիսի նեղ վարտիքը:

— Դրանք թող մնան, — կտրեց տէրտէրը կնոջ խօսքը: — Հիմա պէտք է տեսնենք, թէ ինչ բանի է նման քո բերած նախաճաշիկը:

Տէրտէրը ետ քաշեց մի ուրիշ վարագոյր եւ նրա ետեւից դուրս բերեց մի մեծ սրոակ գինի, դրեց իր կողքին եւ նստաւ սեղանի մօտ: Մենք եւս մօտեցանք ուտելու: Նախաճաշիկը բաւականին լաւ էր պատրաստած. շա՜տ ապրի տէրտէրակինը, ամենեւին չէր երեւում, թէ հասարակ գիւղացու եփած կերակուրներ լինեն: Բայց տէրտէրակինը գիւղացի չէր, նա Վանայ քաղաքիցն էր, եւ որպէս յայտնեց ինձ յետոյ Ասլանը, նա տէր հօր երկրորդ կինն էր, որի հետ ամուսնացել էր նա իր քահանայութեան ժամանակ, առաջին կինը մեռնելուց յետոյ: Թէեւ հայ քահանաներին թոյլ տրուած չէ երկրորդ ամուսնութիւն, բայց «գիժըէ այն տէրտէրներից չէր, որ ենթարկուէր եկեղեցական կանոններին: Նա ամէն բանի մէջ, որպէս ռամկօրէն ասում են «չոմախի (մահա-